Քէլիի մահը բացատրուեցաւ, երբ կասկած յայտնուեցաւ, որ Լոնտոնի կառավարութիւնը կը կեղծէր իր գաղտնի սպասարկութիւններուն տեղեկութիւնները՝ Իրաքի տրամադրած կորիպային սպանութեանոցի կապակցութեամբ, իր վճռած պատերազմի ի գին ամէն պոհերուն հաւատարմի ու գործադրելի զարմանելու միտումով:

Քէլիի անբացատրելի մահը քիչ մը աւելի կ'այրէ վարչապետ Թոնի Պլէրի կիսով այրած անձնաթուղիքը:

Բրիտանացիք իրենց վստահութիւնը կորսնցուցած են իրենց վարչապետին եւ կառավարութեան հանդէպ:

Քորէա իր ճամբորդութեան ընթացքին, իր պաշտօնակիցին հետ տեղի ունեցած մամլոյ ատուի մը ընթացքին, լրագրող մը հարց տուաւ Պլէրի՝ «եթէ իր ձեռքերը արհիւտ են»:

Տիրեց կատարեալ լռութիւն: Պլէր չպատասխանեց կամ չուզեց պատասխանել: Այս պարագային արդիւնքը նոյնն է, լռութիւնը աւելի խօսուն է, քան՝ տրուելիք հաւանական պատասխան մը:

«ԱՉՍՏ ՕՐ»

# ՀՍԿԵԼՈՒ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒԵԼՈՒ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Չոյզ ընտրութիւնները երեւան բերին անկանոնութիւններ, որոնք գարմանալի չէին, բայց կրնային նաեւ տեղի չունենալ: Աւանդութիւն մը՝ ժառանգուած միակուսակցական դրութենէն, բայց քննադատելի՝ կայուն ժողովրդավարական կարգունեցող երկիրներէ դիտուած: Այդ անկանոնութիւնները կը վերաբերէին եւ քուէարկութեան եւ ընտրապայքարին: Որպէսզի ընտրապայքարը ժողովրդավարական ըլլայ, անհրաժեշտ են լրատուական շրջանակներ, անոնց գանազանութիւնը մանաւանդ, որպէսզի խօսքի եւ կարծիքի տարբերութիւնները ազատօրէն արտայայտուին:

Այս մասին խօսեցան Եւրոխորհուրդի ղեկավարը, քննադատեցին, զեկուցեցին: Կրնանք առարկել, որ ԱՊՊԻ երկիրներուն բազմաթիւ հայաստան բաժանումներու ղեկավարները կ'արժանանան իրենց անհրաժեշտ մեծ ազդեցութեամբ, երբ «ԱՅ» հեռատեսիլի կայանը ղադրեցաւ, արտօնութիւնը չվերանորոգուեցաւ: Ան որոշակի կերպով իշխանամէտ չէր: Կրկին, հինգ ալիքներու համար մրցոյթ յայտարարուած էր, զիմուններ եղած էին: «ԱՅ» եւ «Նոյեան Տապան» մամուլը գործակալուութիւնը ներկայացուցած էին իրենց թեկնածուութիւնը: Եթէ ճիշդ է, որ «ԱՅ» շատ աւելի լաւ ծրագիր ունէր, բովանդակու-

թեան եւ տնտեսական, անոր արտօնութեան մերժումը դրական կերպով չի կրնար դիմաւորուել հայկական եւ միջազգային հանրային կարծիքին կողմէ: Որոշողները շատ լաւ գիտնալու էին, թէ ինչպիսի բարդութիւններու ընդառաջ կ'երթան եւ ընդհանրապէս երկիրը ինչպիսի դժուարութիւններու կ'առաջնորդեն:

Եւրոխորհուրդի մէջ տակաւին օրակարգ են Հայաստանի գոյգ ընտրութիւնները: Ապահովաբար պիտի քննուին վրատուական շրջանակները ընտրութիւնները: Եւրոխորհուրդը կրնայ բացասականօրէն գիրքորոշուիլ Հայաստանի եւ կողմակի միւս հանրապետութիւններուն նկատմամբ: Հայաստան կը վայելէ համակրանք, բայց այդ պատճառով, որ Եւրոխորհուրդը բացառութիւն ընէ, աչք զոյգ ակնբախ խախտումներու դժով: Խորհրդարանական պատուիրակութեան մասնակցութիւնը եւ իրաւասութիւնները կրնան խնդրոյ առարկայ ըլլալ եւ Հայաստան ոչինչ կը չափ, մանաւանդ որ մահապատիժի հարցով եւ Եւրոխորհուրդը տրամադիր չէր: Կրնանք ասել, որ Հայաստանի կողմէ մշակուող առաջըրթնի տարբերակը, քանի որ մահապատիժի վնասը սկզբունքէ մը կը ըլլի եւ գոյն կարկտանի ձեւով ընդունիլը խզ է, որուն գոհ չ'երթար Եւրոխորհուրդը: Այս երեւոյթները չեն կոչուած Հայաս-

տանի միջազգային վարկը բարձրացնելու, մանաւանդ որ կը սպասուին հիմնահարցերու շուրջ լայնակցութիւններ, որոնց շարժողութեան համար պայման է ներկայանալ անխոցելի դիմագիծով: Գիտենք, որ այդ չէ մեր պատկերը այսօր եւ «ԱՅ» հեռատեսիլի արտօնութեան մերժումը չի վկայեր բարելաւման ճիգին մասին:

Հայրենասիրութիւնը նաեւ խստագահանջութիւն է, բնախնդրութիւն: Այս գոյգանակներն են: Կարելի չէ անտես թողուլ մանաւանդ քաղաքական երեսը: Հայաստանի ապագան, վերականգնումը եւ ամրացումը սերտօրէն կ'առնչուին արտաքին աշխարհի հետ իր յարաբերութիւններուն, որոնք եւ արարական աշխարհի, հեռանկարային ըմբռնումով՝ Եւրոպայի: Հայաստանի ղեկավար ղեկները ամէն առիթով կը յիշեցնեն, որ հարկ է համարուիլ Եւրոպայի, վարել, ինչպէս սովորաբար կ'ըսեն (թէ եւ չըսեն աւելի լաւ կ'ըլլայ)՝ ինտեգրացիոն քաղաքականութիւն: Մամուլի ազատութիւն եւ աշխատանքի չիմանաբար արժէք ունին Եւրոպայի համար: Հսկելու եւ հակակշռելու ժառանգուած սովորութիւնը չէ կոչուած ինտեգրացիոնը զիւրացնելու: Ընդհակառակն:

Համախոհական կառավարութեան մաս կազմող Հ. Յ. Դաշնակցութեան

Հայաստանի ղեկավարներէն Արմէն Ռուստամեան, որ Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու նախագահն է, որ կը նշանակէ մնալու շփում ունենալ Եւրոխորհուրդի հետ, յստակօրէն կը դատապարտէ «ԱՅ»ի պատկերասփռելու արտօնութեան մերժումը: Իրեն կարելի չէ վերագրել ընդգիծութեան պատկանելու յանցանք, կողմնապաշտական դիրքորոշում: Ան քայլ մըն ալ առաջ կ'երթայ եւ կը թելադրէ, որ Ազգային ժողովը լսումներ կազմակերպէ, ունկնդրութիւն, որպէսզի իրենք զիրենք իրաւագրուած համարողներ ներկայա-

նան օրէնսդիր ժողովին՝ փաստարկներով: Թերեւս այս է լաւագոյն ուղին, որպէսզի Հայաստան բարելաւէ Եւրոխորհուրդին մօտ իր պատկերը, երկրին մէջ հաստատուի աւելի լայն ժողովրդավարութիւն եւ նուազին գոյգ ընտրութիւններու իրրեւհետեւանք սրուած տրամադրութիւնները: «ԱՅ» հեռատեսիլի հարցը նոր բեւեռացումներու պատճառ-պատրուակ չեղած՝ օրէնքով եւ իմաստութեամբ կը գտնուի՝ ազգային տեսանկիւնէ գրական լուծում:

Յ. ՊԱԼԵԱՆ

**ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏՐԴ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԺՈՂՈՎԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷԶ**

Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Տրդ ժողովի Նախապատրաստական Յանձնախումբի ժողովը տեղի ունեցաւ Ուրբաթ, 18 Յունիս 2003ին, «Բողոտոր» պանդոկին մէջ: Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, ժողովին մասնակցեցաւ Սեպուհ արք. Սարգիսեան (առաջնորդ Թեմիսի Հայոց թեմին), որ ատենապետեց Յանձնախումբի ժողովին:

Ժողովականները քննարկեցին Գործադիր Վարչութեան կողմէ Յանձնախումբին եղած առաջարկները եւ անոնց լոյսին տակ պատրաստեցին յառաջիկայ Դեկտեմբերին Կիպրոսի մէջ գումարուելիք Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Տրդ ժողովի ամբողջական օրակարգերն ու ժողովին կապուած հարցերը:

**ՄԵԾ ԻՐԱԳԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՏԵԻՇԵՔԷ BIG SALE**

**ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ 5000 ՄԵԹՐ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ**

**BIG SALE STORES**

**BIG SALE BRANCHES**

- \* ՀԱՍՐԱ ՄԻՆԵՍԻ Փեքսեւեւի ԿիՅ 01 / 343343
- \* ՆԱՊԱԹԻԷԻ ՀՐԱՊԱՐԱԿ 03 / 949796
- \* ՊԵՐԺ ՊԱՐԱԺՆԷ 03 / 678501
- \* ԱՆԹԻԼԻԱՍ ՍԵՆԹՐ St. Elie 03 / 814161
- \* ՄԱՐ ԷԼԻԱՍ CLASS ՎԱՃԱՆԱՍԵՐ ԿԻՅ 03 / 602554
- \* ՅԵՐՆ ԷԼ ՇԵՊԷՔ ՄԻՆԵՍԻ ՍԵՍԼԱ 01 / 294090

Թ-Ի ՇԸՐԹ 6.000 Լ.Ո. | ՆԱԳՈՒՄՏ 8.000 Լ.Ո. | Թ-Ի ՇԸՐԹ 2.000 Լ.Ո. | Թ-Ի ՇԸՐԹ 7.000 Լ.Ո. | ՆԱԳՈՒՄՏ 2.000 Լ.Ո. | ԳԻՆՈՒՐԱԿԱՆ ԶԵԻՔ Թ-Ի ՇԸՐԹ 10.000 Լ.Ո. | ԳԼԻՄԱԿ 2.000 Լ.Ո. | ՇԱՊԻԿ 10.000 Լ.Ո. | Թ-Ի ՇԸՐԹ 10.000 Լ.Ո. | ՏԱՐԱՍ 5.000 Լ.Ո. | ԱՆԹԻ ՊԼՈՒՉ 2.000 Լ.Ո. | ՏԱՆՏԱԿ 4.000 Լ.Ո. | ԿՕՇԻԿ 4.000 Լ.Ո. | ՇԱՐԱՍ 6.000 Լ.Ո. | ԼԱՅՆԿԱՐԸ ՏԱՐԱՍ 10.000 Լ.Ո. | Թ-Ի ՇԸՐԹ 5.000 Լ.Ո. | ՍԱՆՏԱԿ 4.000 Լ.Ո. | ԿՕՇԻԿ 4.000 Լ.Ո. | ԼՈՂԱԶԳԵՄՏ 9.000 Լ.Ո.

# Թուրքիա - Կարգապահ

## ԱՋՐՊԵՅՃԱՆ-ԵՒՐՈՒՄՈՐՀՈՒՐԳ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

### ՀԱԿԱՌԱԿ ԵՒՐՈՒՄՈՐՀՈՒՐԳԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒՄ, ԹԱԼԻՇԱԿԱՆ ԸՆԴՈՒՄԵՏՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅԱՒ ՑՄԱԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ

Անցեալ շաբաթավերջին Ազրպէյճանի իշխանութիւնները առին քայլ մը, որ կրնայ վճարող դեր ունենալ Եւրոխորհուրդին կողմէ պատիժներու սահմանման հարցին մէջ: Հակառակ Եւրոխորհուրդի պահանջներուն եւ անոր անդամակցութեան պայմաններուն, Ազրպէյճանի իշխանութիւնները կասեցուցին քաղաքական բանտարկեալ Ալիբերամ Կուսմատովին դէմ արձակուած դատավիճակը: Կուսմատովի ձերբակալուած էր 10 տարի առաջ, «չինձու» յանցանքի մը համար: Միջազգային կազմակերպութիւններու պնդումով վճարեկ ատեալներ վերատեսուցութեան ենթարկուած է անոր պարագան, սակայն ուժի մէջ ձգած է նախկին վճիռը, որ ցմահ բանտարկութիւնն էր: Կուսմատովին փաստաբանները կ'ուզեն բողոք ներկայացնել մարդկային իրաւանց եւրոպական դատարանին:

Ալիբերամ Կուսմատովի խորհրդային Ազրպէյճանի տարածքին մէջ խորհրդային Միութեան փլուզումէն ետք ստեղծուած թալիշական հանրապետութեան հիմնադիրն է: Թալիշներուն ազգային ազատագրական շարժումը դաժանորէն ճնշուեցաւ, իսկ թալիշ-Մուղանական հանրապետութեան նախագահ ձերբակալուեցաւ եւ մահուան դատապարտուեցաւ: Հետագային դատավիճակը փոխուեցաւ ցմահ բանտարկութեան: Եւրոպական բոլոր կազմակերպութիւնները կուսմատովի դէմ զանազան քաղաքական բանտարկեալներու անուններ՝ Իսկենտէր Համիտով, Ռահիմ Կազիբեկ եւ Ալիբերամ Կուսմատով: Ազրպէյճանի քաղաքական կլերֆայտի վերջին գեկոյցին մէջ կը պահանջուէր անվերապահօրէն ազատ արձակել Կուսմատովի եւ ժամկէտ ճշդուած էր մինչեւ Սեպտեմբեր: Հակառակ պարագային, Եւրոխորհուրդը որոշած էր պատժամիջոցներ կիրարկել: Այսօր արդէն յստակ է, որ Պաքու չէ կատարած իր պարտաւորութիւնը, հետեւաբար շատ հաւանաբար Ազրպէյճանին դէմ պատժամիջոցներ պիտի ճշդուին:

Արդեօք ինչո՞ւ Ազրպէյճանի ղեկավարները այդքան խիստ կեցուածք որդեգրած են այդ հարցին գծով: Ինչո՞ւ անոնք պատրաստ են պատժամիջոցներու գնով:

զայն ճաղերու ետեւ պահել: Արդեօք ան այդքան վտանգաւոր է Ազրպէյճանին համար: Հաւանաբար այն անոր ազատ արձակումը կրնայ ազգային ազատագրական պայքարի նոր ալիք մը բարձրացնել Ազրպէյճանի բնիկ ժողովուրդներուն մէջ: Անկասկած ան մտադիր է շարունակել թալիշներու ազատագրական պայքարը: Այդ մէկը ան հաստատեց Եւրոխորհուրդին ուղղուած իր վերջին յայտարարութեան մէջ: Մէկուկէս ամիս տեւած հացադուլէն ետք Ալիբերամ Կուսմատովի հաւաստեց, թէ պիտի շարունակէ 1993ին հռչակուած հանրապետութեան անկախութեան ճանաչման համար պայքարը եւ միջազգային կազմակերպութիւններէն պիտի պահանջէ «դադրեցնել մէկուկէս միլիոն հաշուող թալիշներուն ցեղասպանութիւնը եւ ձուլումը»: Փաստաթուղթին մէջ կասկածի տակ կ'առնուի Ազրպէյճանի հանրապետութեան գոյութեան իրաւական հիմքը: Կուսմատով կը նշէ, թէ՛ պատմականօրէն այս հողին վրայ ապրած են թալիշները, քրիտները, լեզգիները եւ այլ ազգեր, եւ միայն 12րդ դարուն շրջան հասած են թրքալեզու ցեղերը, որոնք բոլորին իւրացուցած են ուրիշին հողերը եւ իշխանութիւն հաստատած՝ անոնց վրայ: Ըստ Կուսմատովի, «արդէն սկսած է հազարամեակներ շարունակ այդ հողին վրայ բնակող եւ անոր իսկական տէրերը համարուող բոլոր ոչ թրքալեզու ազգերուն ձուլումի գործընթացը»:

Մուղանական դաշտավայրին բնիկները մինչեւ օրս «ազրպէյճանացիներ» կ'ենթարկուին: «Ազգային - ցեղային խտրականութիւնը, ոչ թուրք ազգերուն դէմ բանեցուած ճնշումները եւ անոնց ձուլումը, անոնց տարրական քաղաքացիական իրաւունքներուն ոտնահարումը Ազրպէյճանի մէջ հասած են պաշտօնական պետական քաղաքականութեան մակարդակի: Այդ պայմաններուն մէջ ոչ թուրք ժողովուրդներուն ներկայացուցիչները ստիպուած են ծածկել իրենց ազգային պատկանելիութիւնը: Երկիրին մէջ տիրող անասնաճ համաթուրանականութիւնը վերջնականապէս պառակտեց ազգը եւ առիթ տուաւ Ազրպէյճանի ժողովուրդներուն միջեւ ընդդիմադիր հակամարտութիւններու: Այս պայմաններուն մէջ է, որ թալիշները ելած են ազգային ազատագրական պայքարի», կը գրէ Կուսմատով: «Եթէ պետութիւնը այդպէս լիտիօրէն կը բռնաբարէ իր քաղաքացիներուն իրաւունքները, գանձեր կը գրկէ առեւտուրի եւ քաղաքականութեամբ զբաղելու կարելիութիւններէն, ապա ինչո՞ւ մենք իրաւունք պիտի չունենանք պայքարելու այդպիսի պետութեան մը դէմ», հարց կու տայ թալիշներու ղեկավարը: Հետագայը քաղաքականութեան դատապարտուած է «հայրենիքի դաւաճանութեան» յանցանքով: Եւրոխորհուրդը գիտէ, որ Կուսմատով իր հայրենիքին, թալիշստանին հաւատարիմ է ունի անձէ աւելի: Որպէսզի այս հարցը միջազգային քննարկումներու առարկայ չդառնայ, պաշտօնական Պաքու կը շարունակէ Կուսմատովի ճաղերու ետեւ պահել:

Համապատասխան «ՓԱՆ ԱՐՄԻՆԻԸՆ ՆԵԹ» կայք

## ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒ ԱԲԵԼԻ ՀՐԱՏԱՊ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Իրաքի դէմ պատերազմի նախօրեակին Թուրքիոյ սահմանները ամերիկեան ուժերուն դիմաց բանալու շուրջ ծայր առած թուրքեւամերիկեան տարակարծութիւնները, որոնք կը կարծուէր, թէ հարթուած են, այլ եղանակներով կը շարունակուէին: Ամէնէն ուշագրաւ միջադէպը 4 Յունիսին հիւսիսային Իրաքի մէջ կը տարբերուէր: 11 թուրք սպաներու եւ ենթասպաներու ձերբակալուութիւնն էր: Մինչ ամերիկեան կողմը կը հաստատէ, թէ անոնք կը պատրաստուէին ահաբեկչական գործողութիւններու, թրքական կողմը կը հերքէ այս պնդումները: 15 Յունիսին պաշտպանութեան նախարար Տ. Ռամսֆելտի կողմէ վարչապետ էրտողանի յղուած նամակով ամերիկեան կողմը, «քննարկելէ ետք խառն յանձնախումբի տեղեկագիրը», կը շարունակէ հաստատել, թէ իրենց տեղեկութիւնները ճշգրիտ են, կը մարտի, որ մնան դէպքեր չկրկնուին, եւ յոյս կը յայտնէ, որ երկու կողմերու յարաբերութիւնները թաքցնելու փորձերը կ'արգելու: Բանակայինները, նախագահը եւ քաղաքական գործիչներ, որոնք կ'ակնկալէին, որ Միացեալ Նահանգները բացառապէս պատրաստ էին իրաւունքները շրջադարձելու: Եւրոպական Միութեան հաստատած պայմանները ամբողջացնելու համար արդէն իսկ քննարկման սեղանին դրուած է փոփոխութիւններ, նախագահը եւ քաղաքական գործիչներ, որ Ազգային Անվտանգութեան խորհուրդի կազմութեան (բանակայիններու ղեկավարութեան) անդամները արգելու կը շարունակեն իրենց անսահման շահերը հաւանաբար կարեւոր փոփոխութիւններ կը նախատեսէ:

Այս հանգրուանին, հաւանաբար Միացեալ Նահանգներու հետ յարաբերութիւններու որակի փոփոխութիւնը հաւասարակշիռու համար թուրքեւամերիկեան կողմը կը հերքէ այս պնդումները: 15 Յունիսին պաշտպանութեան նախարար Տ. Ռամսֆելտի կողմէ վարչապետ էրտողանի յղուած նամակով ամերիկեան կողմը, «քննարկելէ ետք խառն յանձնախումբի տեղեկագիրը», կը շարունակէ հաստատել, թէ իրենց տեղեկութիւնները ճշգրիտ են, կը մարտի, որ մնան դէպքեր չկրկնուին, եւ յոյս կը յայտնէ, որ երկու կողմերու յարաբերութիւնները թաքցնելու փորձերը կ'արգելու: Բանակայինները, նախագահը եւ քաղաքական գործիչներ, որոնք կ'ակնկալէին, որ Միացեալ Նահանգները բացառապէս պատրաստ էին իրաւունքները շրջադարձելու: Եւրոպական Միութեան հաստատած պայմանները ամբողջացնելու համար արդէն իսկ քննարկման սեղանին դրուած է փոփոխութիւններ, նախագահը եւ քաղաքական գործիչներ, որ Ազգային Անվտանգութեան խորհուրդի կազմութեան (բանակայիններու ղեկավարութեան) անդամները արգելու կը շարունակեն իրենց անսահման շահերը հաւանաբար կարեւոր փոփոխութիւններ կը նախատեսէ:

Այս հանգրուանին, հաւանաբար Միացեալ Նահանգներու հետ յարաբերութիւններու որակի փոփոխութիւնը հաւասարակշիռու համար թուրքեւամերիկեան կողմը կը հերքէ այս պնդումները: 15 Յունիսին պաշտպանութեան նախարար Տ. Ռամսֆելտի կողմէ վարչապետ էրտողանի յղուած նամակով ամերիկեան կողմը, «քննարկելէ ետք խառն յանձնախումբի տեղեկագիրը», կը շարունակէ հաստատել, թէ իրենց տեղեկութիւնները ճշգրիտ են, կը մարտի, որ մնան դէպքեր չկրկնուին, եւ յոյս կը յայտնէ, որ երկու կողմերու յարաբերութիւնները թաքցնելու փորձերը կ'արգելու: Բանակայինները, նախագահը եւ քաղաքական գործիչներ, որոնք կ'ակնկալէին, որ Միացեալ Նահանգները բացառապէս պատրաստ էին իրաւունքները շրջադարձելու: Եւրոպական Միութեան հաստատած պայմանները ամբողջացնելու համար արդէն իսկ քննարկման սեղանին դրուած է փոփոխութիւններ, նախագահը եւ քաղաքական գործիչներ, որ Ազգային Անվտանգութեան խորհուրդի կազմութեան (բանակայիններու ղեկավարութեան) անդամները արգելու կը շարունակեն իրենց անսահման շահերը հաւանաբար կարեւոր փոփոխութիւններ կը նախատեսէ:

Եւրոպական Միութեան հաստատած պայմանները ամբողջացնելու համար արդէն իսկ քննարկման սեղանին դրուած է փոփոխութիւններ, նախագահը եւ քաղաքական գործիչներ, որ Ազգային Անվտանգութեան խորհուրդի կազմութեան (բանակայիններու ղեկավարութեան) անդամները արգելու կը շարունակեն իրենց անսահման շահերը հաւանաբար կարեւոր փոփոխութիւններ կը նախատեսէ:

## ԹՈՒՐԻՔ - ԱԲԽԱԶԱԿԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Վրացական ծովափ միաւորներ Սեւ ծովուն մէջ կասեցուցած են մէկ յայտնաբերած են 25 հազար արխազական անցագրերը: Արխազիոյ նախնական կառավարութեան անվտանգութեան նախարար Լեւան Կիկնաձէ յայտնած է, թէ թրքական ղեկավարութիւնը արխազներէն ու ռուսներէն ու Արխազիոյ հանրապետութեան համար անցագրեր են տպած է: Թուրքիա պաշտօնապէս չէ ճանաչած Արխազիոյ անկախութիւնը, այսուհանդերձ տնտեսական աշխուժ համագործակցութիւն ծաւալած է Ստրաժի (Արխազիոյ մայրաքաղաքը) իշխանութիւններուն հետ:

Կիկնաձէի հաւաստումով, միայն այս տարուան մէջ կասեցուցած են մէկ յայտնաբերած են 25 հազար արխազական անցագրերը: Արխազիոյ նախնական կառավարութեան անվտանգութեան նախարար Լեւան Կիկնաձէ յայտնած է, թէ թրքական ղեկավարութիւնը արխազներէն ու ռուսներէն ու Արխազիոյ հանրապետութեան համար անցագրեր են տպած է: Թուրքիա պաշտօնապէս չէ ճանաչած Արխազիոյ անկախութիւնը, այսուհանդերձ տնտեսական աշխուժ համագործակցութիւն ծաւալած է Ստրաժի (Արխազիոյ մայրաքաղաքը) իշխանութիւններուն հետ:

Անցեալ տարուան Ապրիլին Թուրքիոյ պետական նախարար Մեհմէթ Բիշէքի թիֆլիսի մէջ վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտաձէի հետ տեսակցելէ ետք խոստացած էր, որ «թրքական նախարար պիտի դադարեցնէ Արխազիոյ հետ ապօրինի առեւտուրը»:

«Թուրքիոյ» լրատու գործակալութիւնը ճաղողեց, որ երկու տարեկան սկսած իր միջոցով կը վերջերս սպանուեցաւ Թուրքիոյ Իզմիր քաղաքի արճարանէն մէկ մը ծագած էր երկու բուրբերու միջեւ: Անոնցմէ մէկը, չափազանց բարկացած, ատրճարանով կրակ բացեալ էր սպանուելով մանուկն ու բուրբ յանձնարող մը: Երկու այլ անձեր վիրաւորուած էին: Կարգին մէջ քննարկուած պահանջները սկսած էին արտաքին միջոցով կը գտնուէր անոր կողմէ:

## ՊԱՔՈՒՆ՝ ՀԱԿԱՌԱՆԵԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐՈՒ ՄԻՋՆԱԲԵՐԴ



Գեորգիանի

Այսպէս կոչուած «Հարաւային Ազրպէյճանի (Իրանի հիւսիսային հատուածը - «Ա») վերածնունդի Ազգային Շարժումի» (ԱԱՀԱՄ) առաջնորդ Մահմուտալի Չեհրեզանլի Պաքու մեկնումով Ազրպէյճան դարձած է իրանի մէջ յեղաշրջման նախապատրաստութեան իւրաքանչիւր ամրոց: Իրաւական «Նեգալիսիմայա Կազեթա» կը յայտնէ, թէ ան մեծ շուքով կ'ընդունուի ազրպէյճանական կուսակցութիւններուն կողմէ, իսկ Պաքուի լրատուամիջոցները յայտնէին կ'անդրադառնան անոր գործունէութեան: Չեհրեզանլի կոչը՝ «Բոլորս դէպի պայքար՝ իրանեան վարչակարգին դէմ», հաւանաբար է մեծ թիւով կողմնակիցներ, որոնք կը կիսեն իրանի հիւսիսային շրջաններուն մէջ «Հարաւային Ազրպէյճանի անկախ պետութիւն» ստեղծելու գաղափարը: Թեհրանի մամուլը արդէն իսկ արձագանգած է Ազրպէյճանի մէջ ոչ բարեկամական զարգացումներուն: «Հայտար Ալիբեկ կրակի հետ կը խաղայ արտօնելով, որ Չեհրեզանլի Պաքուէն կու ուղղէ իրանցի ազրպէյճանցիներուն՝ պայքարելու իրանի սահմանադրական կառավարութեան դէմ», գրեց իրանեան թերթ մը՝ խորհուրդ տալով թեհրանի խզել Պաքուի հետ դիւանագիտական յարաբերութիւնները: «Նեգալիսիմայա Կազեթա»-ի կարծիքով, «հմուտ ռազմավար» Չեհրեզանլի հաշուէ կ'առնէ, որ Միացեալ Նահանգները արդէն իսկ արտապայտուած են իրանեան վարչակարգին դէմ պայքարին մէջ Ազրպէյճանի տարածքը օգտագործելու կարելիութեան մասին:

Մինչ Պաքուի մէջ կ'աշխուժանայ «հարաւային եւ հիւսիսային Ազրպէյճանի» հատուածներու միացման տրամադրութիւնները, Պաքուի իշխանութիւնները պաշտօնական ձեւով չեն քայքայեր այս զարգացումները, սակայն չեն արգիլեր նաեւ անոնց տարածումը:



**ԱՖՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**



**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

**ՅՈՒՑԱՄԱՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՏՐԸ, ԱՅՏՏԻ ԾԵԼԸ, Բ. ՅԱԿԿԵՆ (01) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**



ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԽՐԻՄԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՏԿԱՐԱՅՈՒՄԸ ԵՒ ՎԵՐԱՇԽՈՒԺԱՅՈՒՄԸ

ԽՐԻՄԱՀԱՅԵՐ ՄԻՋՆՈՐԴ՝ ԴԻՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ



Պախչելի գիղից հայոց Սուրբ Փրկիչ վանքը

Խրիմի վրայ օսմանեան տիրապետութեան Հաստատումէն ետք հայոց զէմ ծայր առած կրօնափոխութեան պարտադրանքները եւ բռնութիւնները պատճառ դարձան ժողովուրդի գանգուածային գաղթին՝ զէպի շրջակայ երկիրներ, եւ երբեմնի շէն գաղութը մեծապէս տկարացաւ: Սակայն հետագային վերջ գտան հայաձանքները, եւ կրկին անգամ հայեր ազատութիւններ ու արտօնութիւններ ձեռք ձգեցին: այդ ժամանակ այստեղ կարեւոր դերակատարութիւն ստանձնեցին դիւանագիտական մարզէն ներս:

ԽՐԻՄԷՆ ԶԱՆԳՈՒՄԵՆՅԱՆ ԳԱՂԹ՝ ԳԵՊԻ ՇՐՋԱԿԱՅ ԵՐԿՐՈՒՄԸ

Խրիմի թերակղզիին գրաւումը ամբողջացնելէ ետք օսմանցիք հոն առանձին կառավարչութիւն հաստատեցին: Խրիմի կառավարիչը ընկալեց իր տիրապետութեան ստացաւ: Թերակղզիին ծովափնայ շրջանը շուրջ գոտիներու բաժանուեցաւ: Քեֆէ (Կաֆա), Շնի Գալա, Սուտակ եւ Մանգուպ, իրենց 95 գիւղերով, որոնք ուղղակի օսմանեան գահին կապուեցան, իսկ աւելի հեւտա տարածուող գոտիին մէջ տեղացի Գիւրէյ տոհմի

խաները պահեցին իրենց ներքին ինքնիշխան գոյակիցակը՝ սուլթանի գերիշխանութեան տակ: Անմիջապէս որ օսմանեան տիրապետութիւն հաստատուեցաւ, հայութեան նկատմամբ կիրարկուող բռնութիւնները եւ կրօնափոխութեան պարտադրանքները անտանելի վիճակ ստեղծեցին, եւ նոյն տարին իսկ (1475ին) մեծ թիւով հայեր գանգուածաբար իրենց տունն ու տեղը ձգելով գաղթեցին զէպի հիւսիս, Լեհաստանի Կալիցիա երկրամասը, հայաշատ Կամենէց, Լվով եւ այլ բնակավայրեր: մէկ մասն ալ փախուստի դիմեց զէպի արեւմուտք՝ Մոլտաւիա եւ Թրանսիլվանիա:

Մօտաւոր տուեալներով, մինչեւ այդ ժամանակ հարիւր հազար հոյ գերդաստաններ կը բնակէին Խրիմի մէջ, որոնցմէ յետոյ մնաց հինգէն վեց հազար գերդաստան:

Խրիմի վրայ իրենց իշխանութիւնը ամրապնդելէ ետք օսմանցիք շարժեցան զէպի յարակից երկրամասեր եւ 1476ին ծովէն ու ցամաքէն մեծ յարձակում մը շրջապագեցին Մոլտաւիոյ վրայ: Ժամանակակից Մոլտաւիոյ վրայ ծանր կորուստներու ենթարկուեցաւ մանաւանդ շրջանին հայութիւնը, որուն կարեւոր մասը Խրիմէն գաղթականներն էին: Մոլտաւիոյ հայերէն շատեր հետագային բռնագաղթի ենթարկուեցան:

Օ ս մ ա ն ց ի ք 1484ին գրաւեցին Քիլիան՝ Դանուբի գետաբերանին վրայ եւ յարձակեցան Աքքերմանի վրայ: սուլթանին հրամանով շրջանին հայութիւնը բռնագաղթուեցաւ եւ Պոլիս տարուեցաւ:

Օսմանեան նուաճումներէն ետք Սեւ ծովու նաւահանգիստները կորսնցուցին իրենց միջազգային նշանակութիւնը, առեւտուրը մեծապէս տկարացաւ եւ նեղ, տեղական շրջագիծի մէջ սահմանափակուեցաւ: Արհեստները, որոնք կապուած էին տարանցիկ առեւտուրին հետ, արտաքին շուկան կորսնցնելով՝ նոյնպէս տկարացան:


Հայոց եկեղեցիներուն ու վանքերուն մէկ կարեւոր մասը բռնագրաւուած ըլլալով իշխանութիւններուն կողմէ, ազգային եկեղեցական կեանքը, գրեթէ կազմալուծուած եւ ինքն իր մէջ ամփոփուած, գոյութեան դժուար պայմաններ կը դիմագրաւէր, իսկ գրչութեան երբեմնի շէն օճախները ամայացած էին: Յաճախակի դարձան նաեւ հայ երեւելի զէմքերու զէմ

պարբերաբար կիրարկուող սպանութիւնները: Սակայն օսմանեան իշխանութիւնները յաջողող տարիներուն իսկ կարիքը զգալով հայութեան, իրրեւ ձեռներէց, առեւտրական, արհեստաւոր եւ շինարար ժողովուրդ, փոխեցին իրենց վերաբերմունքը եւ աշխատեցան սիրաշահիլ հայութիւնը: հայկական բռնագրաւուած եկեղեցիներն ու վանքերը վերադարձուեցան եւ վերջ տրուեցաւ կրօնափոխութեան պարտադրանքին:

ՀԱՅ ԱՌԵՏՐԱԿԱՆՆԵՐ ՄԻՋՆՈՐԴ՝ ԽՐԻՄԻ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԻՋԵՒ

Սեւ ծովու հիւսիսային ափերուն վրայ օսմանեան տիրապետութեան հաստատումէն ետք քաղաքական նոր իրավիճակ ստեղծուեցաւ: Թաթարական երբեմնի հզօր եւ լայնածաւալ Ոսկէ Հորդան մեծապէս տկարացած՝ հասած էր քայքայման սեմին, նպաստելով Մոսկովիեան Ռուսիոյ աշխուժացման եւ աստիճանական զօրացման:

Արդարեւ, մոնկոլական եւ թաթարական ներխուժումներու եւ ծանր լուծի զէմ երկարատեւ պայքարներէ ետք ռուսական առանձին տիրոջնեցին սկսան միանալ: Մոսկուայի մեծ իշխան Իվան Գ. (1462-1505) 1470ական տարիներուն գրաւեց Վոլկայի գաղթավայրերը, 1478ին՝ Նովկորոտը եւ 1485ին ալ Թուէլը միացուց Մոսկուայի, որմէ ետք նուաճեց Մոսկուայէն Լիթւանիա:



Եալթայի շրջակայ լեռները

ուանիա տարածուող արեւելեան սլաւոնական իշխանութիւնները եւ լիթւանական սահմանային քաղաքներ: Այսպէսով, սլաւոնական տարբեր ցեղերէ կազմաւորուեցաւ ռուս ժողովուրդը:

Իվան Գ. իշխան քաղաքական յարաբերութիւններ հաստատեց թաթար տարբեր իշխանութիւններու եւ ցեղային միութիւններու հետ: Խրիմի իշխանութեան հետ դաշնակցեցաւ ընդհէմ Ոսկէ Հորդայի Ահմէտ խանին եւ Լիթւանիոյ Ահմէտ խանի մահէն ետք (1481) դաշնակցեցաւ նաեւ նոգայներուն հետ:

Իվան Գ. ի Խրիմի իշխանութեան հետ դիւանագիտական կապերու հաստատման մէջ մեծ դեր ունեցաւ իրիմահայ վաճառական Աստուածատուր, որ աւելի ծանօթ էր Պոլստան անունով: ան դիւանագիտական տարբեր յանձնարարութիւններ եւ հրովարտական փոխանակում կատարեց Խրիմի Մենկլի խանին եւ Մոսկուայի միջեւ:

Խրիմահայ այլ վաճառական մը՝ Պողոս, որ մօտիկ կապեր ունէր Կաֆայի թրքական իշխանութեան եւ խանական ընտանիքին հետ եւ առեւտրական գործառնութիւններ կը կատարէր Մոսկուայի մէջ, կարեւոր դերակատարութիւն ստանձնեց երկուստեք դիւանագիտական յարաբերութիւններու զարգացման մէջ: Ան այնքան Մոսկուայի մէջ, Մենկլի խան անոր եղբայրը՝ Կուլին յատուկ հրովարտական ուղարկեց Իվան Գ. ի մօտ, մեծ իշխանն էր խնդրելով, որ Պողոսը խոճա Լուծֆիի հետ ուղարկէ իրիմ:

Սակայն Պողոս մահացաւ Մոսկուայի մէջ եւ Իվան Գ. 16 Մարտ 1499ի հրովարտական Օլէկ Կոլիպոստովը իբրեւ դեսպան ուղարկեց խանին մօտ: հրովարտական մէջ արձանագրուած է՝ «Համայն Ռուսիոյ մեծ իշխան Իվան Գ. վասիլեւիչէն Օլէկ Կոլիպոստովին: Այստեղ կար կաֆայի մը, Պողոս անունով, հայ, այժմ այլեւս չկայ, եւ ես հրամայած եմ անոր իրերը դնել եւ կնքել: Եթէ Կաֆայի կամ Յարաբատի մէջ Թուրքիոյ սուլթանին անունով անոնց պաշտօնեաները Պողոսի իրերուն մասին քեզի կը հարցընեն, ապա դուն անոնց կը պատասխանես, որ այդ մարդը դեռ մեր թագաւորի երկրին մէջ եւ այժմ մահացած է, եւ մեր թագաւորին մաքահաւանքները հրամայած եմ անոր ապրանքը պահպանել եւ կնքել: Եթէ ունի այդ մարդը երեսխաներ կամ ո՛վ որ ըլլայ անոր ցեղէն, արդարութեան դրդուած ձեռք բազաւորը, որուն որ ուղարկէ մեր թագաւորին մօտ այդ ապրանքին համար, մեր թագաւորը կը հրամայէ այդ ապրանքը անոր յանձնել:»

Բայց Պողոսի առեւտրական գործառնութիւնները այնքան լայն էին, անոր թեղիականութիւնը այնքան մեծ էր, որ Խրիմի թրքական իշխանութիւնը, չբաւարարելով Իվան Գ. ի հրովարտական, նոր դեսպանութիւն մը ուղարկեց Մոսկուա՝ բաղկացած Կաֆայի փաշա Մեհմէտ



Կաֆայի ձեմովական ամրոցը

Շահապետի եւ Մենկլի խանի ներկայացուցչիններէն: Անոնք Իվան Գ. ն կը խնդրէին Պողոսի ապրանքները առանց մաքսի յանձնել՝ խոտտանալով փոխարէնը մոսկուացի ռուս վաճառականի Խրիմի մէջ մահացած յարաբային առանց մաքսի վերադարձնել մնացած ապրանքները:

Մինչեւ այդ ժամանակ թրքական իշխանութիւնները տեսակ-տեսակ տուրքեր կը գանձէին ռուս վաճառականներէն. Իվան Գ. պահանջեց յարգել միջազգային ընդունուած օրէնքները եւ խոտտացաւ փոխարէնը Պողոսի ապրանքներուն վրայէն մաքսը վերցնել: Ի վերջոյ թրքական կողմը զիջեցաւ, որմէ ետք Պողոսի ապրանքները Կաֆայի փաշային դեսպաններուն միջոցով դրկուեցան Խրիմ:

Այս ժամանակաշրջանին Մոսկուայի մէջ գործած խրիմահայ երեւելի վաճառականներ էին Նաչերես, Նարազուր, Սարգիս, Բարեկ, Աւետիք եւ այլք:

ԵԿԵՂԵՏԱԿԱՆ ՆՈՒՐԱՎԱՆԵՐ ԽՐԻՄԻ ՄԷՋ

Խրիմի հայոց եկեղեցիներու ու վանքերու բռնագրաւումէն, կրօնափոխութեան պարտադրանքներէն եւ յետոյ այլ եկեղեցիներու վերադարձուելէն ու ազատութիւն շնորհուելէն ետք, եկեղեցական կեանքը վերակազմելու եւ աշխուժացնելու նպատակով 1506ին էջմիածինէն Կաֆա ուղարկուեցան երեք նուիրականներ՝ Յովհաննէս եւ Սարգիս եպիսկոպոսներ եւ Դաւիթ արեւելս: Անոնք նախ մեկնեցան Պոլիս, որկէ յետոյ ծովու ճամբով անցան Խրիմ՝ աննախընթաց խանդավառութիւն ստեղծելով ժողովուրդին մէջ:

Կաֆայէն յետոյ անոնք անցան Ղարապոլտան (Պեսարապիս), ուր կեդրոնացած էր Խրիմէն գաղթական հայութեան մէկ ստուար համեմատութիւնը: էջմիածին վերադարձի ճամբուն վրայ, 1506 Հոկտեմբերին անոնք նահատակուեցան Ամասիոյ մէջ:

ԽՐԻՄԱՀԱՅ ԲԱՆԱԳՐԱՅՆԵՐ

Ռուսիոյ եւ Խրիմի իշխանութեան միջեւ յարաբերութիւնները վաղեմաբար Իվան Գ. ի մահէն ետք, 1505ին, երբ անոր յաջորդեց գաւազը՝ Վասիլի Գ.: Խրիմ գորավիզ կանգնեցաւ Լեհաստանի եւ Լիթւանիոյ, որոնք Ռուսիոյ մրցակիցներն էին: Սահմանամերձ շրջաններուն մէջ կրկին եւ ու սպաստակութիւնները անպակաս էին, իսկ 1512ին մեծ պատերազմ ծագեցաւ Լեհաստանի եւ Մոսկուայի միջեւ:

Այս ժամանակ իրիմահայ քանի մը վաճառականներ դիւանագիտական բանակցութեան ձեռնարկեցին լուծելու համար տագնապը: անոնցմէ Աւետիք եւ Գրիգոր Վասիլի Գ. ի եւ Մենկլի խանին միջեւ միջնորդի դեր կատարեցին, իսկ Սարգիս եւ Բարեկ դիւանագիտական կարեւոր յանձնարարութիւն կատարեցին երկու պետութիւններուն միջեւ: Աւետիք խանին հրովարտական մէջ յիշուած է իբրեւ իր հպատակը, որ առեւտուր կատարելու համար Լեհաստանէն անցած է Մոսկուա, ուր ժամանակ մըն ալ ձեռք բաւարկուած է: Իսկ Գրիգորի մասին խանը յիշած է, որ իշխան Միխայլ Վոլովիչ անկէ բռնագրաւած է վեց հազար ալթին դրամական արժողութեամբ կզաքիսի մորթ: խանը կը խնդրէր իշխան Լվովիչէն բռնագրաւուած մորթեղէնը յանձնել իր կողմէ զրկուած եւ յատուկ յանձնարարականով օժտուած Սարգիսին եւ Պապա Բատիին:



Ալուշթա

ԿԱՖԱՅԵՏԻ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԱՒՈՐ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿԱԿՈՍ ԺԻՂՈՎԻՆ

Կաֆայի հայ առեւտրականներուն եւ քաղաքական գործիչներուն մէջէն հռչակաւոր դարձաւ Կակոս (Կիրակոս), որ ցանցուած է ժողովին մականունով: Ժողովին հայերէնով քարգմանուած է ջիւղաւանման կամ ջիւղաւանակ իմաստով: Անոր այդ մականունը տրուած էր իր ժլատ բնաւորութեան եւ վաշխառական գործունեութեան իբրեւ բնորոշում: Հետաքրքրական է նշել, որ ռուս առեւտրականներու եւ արդիւնաբերողներու ակամաւոր եւրեիկովներու գերդաստանի՝ անունն ալ նոյն իմաստը ունի:

Կակոս առեւտրական լայնածաւալ գործունեութիւն ունէր Խրիմի եւ Մոսկուայի մէջ եւ տարիներու ընթացքին վիթխարի հարստութիւն ձեռք ձգելով եւ մօտիկ բարեկամութիւն հաստատելով տարբեր իշխանաւորներու հետ՝ երեւելի զէմը դարձած էր: Անոր օժանդակութեամբ եւ միջնորդութեամբ է, որ Մոսկուայի մեծ իշխան Իվան Գ. առաջին անգամ դիւանագիտական յարաբերութիւն հաստատեց Խրիմի Մենկլի Գիւրէյ խանին հետ, որուն իրեն վարձատրութիւն՝ մեծ իշխանը առատօրէն վարձատրեց հայ առեւտրականը:

Այդ ժամանակ Իվան Գ. եւ Խրիմի թաթար խաները բազմաթիւ տարակարծութիւններ ունէին եւ քաղաքական մրցակցութեան մէջ էին: Կաֆայի երեւելիական իշխանութիւններուն հետ եւս Մոսկուա հարցեր ու տագնապներ կը դիմագրաւէր, եւ այդ պատճառով ալ մոսկուացի վաճառականներ մեծ դժուարութիւններ կը դիմագրաւէին կը դիմագրաւէին: Իվան Գ. 1474ին Մոսկուայի մէջ խանին դեսպանէն պահանջեց վերջ տալ մոսկուացի վաճառականներուն նկատմամբ կիրարկուող ճշմունքներուն: Մեծ իշխանը նաեւ Կաֆա ուղղուող իր դեսպանին հրահանգեց գտնել հայ վաճառական Կակոսը եւ անոր հետ խորհրդակցել ճշմունքական իշխանութիւններուն հետ յարաբերութիւններու ձեւաւորելու առաջ:

Իվան Գ. 1475ին որոշեց իր գաւիկին կնուրեան անցնել Մանգուպի իշխանի դուստրը եւ խնամախօսի պարտականութիւնը յանձնեց Կակոսի: Կակոս բանակցութեան մէջ մտաւ կողմերուն միջեւ եւ յաջողեցաւ իրականացնել իրեն յանձնուած պարտականութիւնը՝ բարձր գնահատման արժանանալով:


Խրիմի օսմանեան գրաւումէն ետք (1475ին), երբ հայերու եւ ընդհանուր առմամբ բոլոր քրիստոնեաներուն դէմ հալածանքներ եւ կրօնափոխութեան պարտադրանքներ ծայր առին, Կաֆայի եւ շրջակայքին մէջ գործող ռուս վաճառականներ գերի բռնուեցան թաթարներուն կողմէ եւ կալանաւորուեցան: Կակոս, իբրեւ մօտիկ բարեկամ Իվան Գ. ի եւ ռուսներուն, փրկագին վճարելով ազատեց ռուս վաճառականները, անոնց հագուստներ գնեց եւ ուղարկեց Ռուսիա:

Իբրեւ գնահատանք ռուսական պետութեան մատուցած իր ծառայութիւններուն՝ Իվան Գ. 1486ին յատուկ գնահատանքի եւ շնորհակալութեան գիր ուղարկեց Կակոսի:





### ԻՐԱՆ Կ'ԱՆՏԵՍԷ ԻՐԵՆ ՈՒՂՂՈՒՂ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ



Քամալ Խարազի

Իրան կը մերժէ Եւրոպական Միութեան հետ իր բանակցութիւններուն կապուած որեւէ պայման կամ սպառնալիք, յայտնած է արտաքին գործոց նախարարութեան բանբեր Համիտ Ռիչա Ասեֆի երէկ:

Երկուշաբթի օր, Ե. Միութեան արտաքին գործոց նախարարները «թափ ստացող մտահոգութիւն» յայտնած են Իրանի կորիպային ծրագիրին գծով, զգուշացնելով, թէ առեւտրական գետնի վրայ անոնք Թեհրանի հետ յարաբերութիւնները վերատեսութեան պիտի ենթարկեն եթէ անիկա լիովին չգործակցի ՄԱԿի Կորիպային Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան հետ:

Ասեֆի ընդգծած է, որ Իրան բազմիցս կրկնած է, թէ յանձնառու կը մնայ կորիպային պէնթերու տարածուած արգիլող համաձայնագիրին (Է.Մ.Փ.Թ.Ի.), եւ թէ անիկա «թափանցիկ» ձեւով ցոյց տուած է կորիպային խաղաղ իր գործունէութիւնը՝ լիովին գործակցելով գործակալութեան հետ:

Սակայն Ե. Միութեան յայտարարութեան 24 ժամ ետք, Իրան կը թուէր իր դիրքորոշումը մեղմացուցած ըլլալ Է.Մ.Փ.Թ.Ի. կապուած յաւելեալ փորձագոյի մը կնքումին առնչութեամբ՝ արտօսելով կորիպային իր վայրերը անակնկալ այցելութիւններ, յայտնելով, թէ որոշում մը պիտի կայացնէ մասնագետները յսելէ ետք:

Արտաքին գործոց նախարար Քամալ Խարազի Փրեթորիայի մէջ (Հարաւային Ափրիկէ) մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ Իրանի ղեկավարները այդ փաստաթուղթը կնքելու առնչութեամբ որոշում պիտի կայացնեն, յսելէ ետք ՄԱԿի գործակալութեան մասնագետները, զորս հրաւիրած է Թեհրան:

Երկուշաբթի օր Ասեֆի ըսած էր, թէ առայժմ յաւելեալ փորձագոյի մը կնքումը օրակարգի վրայ չէ:

### ԽԱՐԱԶԻ ԱՇԽԱՏԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԱՍԲԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԵՐՔԷ

Միւս կողմէ, Խարազիի հերքած է Մ. Նահանգներու նախագահ ձորձ Պուշի այն ամբաստանութիւնները, թէ իր երկիրը ապաստան կու տայ եւ զօրավիգ կը կանգնի ահաբեկիչներու, յայտնելով, որ «Մ. Նահանգներն են, որոնք Իրաքի մէջ ահաբեկիչներու ապաստան տուած են, որովհետեւ ներկայիս Իրաքի իւրաքանչիւր անկիւնը ամերիկացիներու հակակշիռին տակ է»:

Իրանեան - հարաւային ափրիկեան երկկողմանի յանձնախումբին մէջ ժողովին առիթով Փրեթորիա գտնուող նախարար Երկուշաբթի օր շեշտած է, թէ Իրան կը պայքարի ահաբեկիչներու դէմ:

Խարազի Մ. Նահանգները ամբաստանած է Իրաքէն գործող իրանցի զինեալ ըմբոստներու զօրավիգ կանգնելու յանցանքով, անոնց արտօսելով, որ «մնաւ եւ գործէ Իրաքի մէջ», հակառակ անոր որ խմբակը «ահաբեկչական արձանագրուած կազմակերպութիւն մըն է»:

Պուշ Թեքսասի մէջ Երկուշաբթի օր դարձեալ զգուշացուցած էր Մուրիան եւ Իրանը, վանոնք ամբաստանելով «անընդունելի» վերաբերմունք ցուցաբերելու յանցանքով՝ ահաբեկչութեան զօրավիգ կանգնելու եւ ապաստան տալու իմաստով:

Ան զգուշացուցած էր, որ այն պետութիւնները, որոնք ահաբեկչութեան զօրավիգ կը կանգնին, «խաշուեան» պիտի ըլլան:

### ԻՐԱՔԻ ԻՇԽՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԱՅ ՍԱԿԻ ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻՆ, ՈՐ ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԵՆ Ի ՎԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԻՐԱՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ



Իրաքցիներուն հայեացքը երէկ ուղղուեցաւ իշխող խորհուրդին, որ կը ներկայանայ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի նիստին, ուր ընդհանուր քարտուղար Բոֆի Անան կը ներկայացնէ Իրաքի գծով իր տեղեկագիրը:

Խորհուրդը, որուն հանդէպ ընդհանրապէս սառն մօտեցում ցոյց տուած է ներքին ճակատի վրայ, քանի մը պատուիրակով կը ներկայանայ Ապահովութեան խորհուրդի նիստին: Երէք պատուիրակներն են Ասնան Պաշաշի, Ահմէտ Ճալապի եւ Աքրիա Հաշեմի: Պատուիրակները պիտի փորձեն ապահովել ՄԱԿի զօրակցութիւնը իրենց ղեկավարած իշխանութեան, որ խիստ քննադատութեան կ'ենթարկուի յատկապէս շիի կրօնապետներու կողմէ:

Շատ բան կախեալ է Անանի տեղեկագիրէն, ուր նշուած է, թէ Իրաքցիները մեծապէս դժգոհ են տիրող իրավիճակէն եւ բռնի ժողովրդավարութենէն, որ կարծէք կը պարտադրուի երկիրին: Տեղեկագիրին մէջ կը նշուի նաեւ, որ ժողովրդավարութիւնը դուրսէն պէտք չէ պարտադրուի, այլ՝ պէտք է ծնի ներսէն: Տեղեկագիրը ահապանգ կը հնչեցնէ նաեւ Պաղտատի եւ այլ քաղաքներու մէջ տիրող անապահովութեան համար: Իրաքի տարածքին ռճիրները, կողոպուտը եւ զինեալ միջադէպերը տակաւին հակակշիռի տակ չեն առնուած: Անանի տեղեկագիրը կը հաստատէ, որ ապահովութեան գոյութիւնը կամ բացակայութիւնը կ'ազդէ Իրաքի ներկայ կեանքին բոլոր ազդակներու վրայ:

Իրաքի դէմ յայտարարուած պատերազմին աւարտէն ի վեր, առաջին անգամ ըլլալով ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը կը քննարկէ յետպատերազմեան Իրաքի իրավիճակը: Ապահովութեան խորհուրդի անդամները նաեւ առիթը պիտի ունենան առաջին անգամ ըլլալով պաշտօնապէս յսելու Իրաքի իշխող խորհուրդին տեսակէտները: Իսկ Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա պիտի փորձեն ապահովել բազմազգեան ուժի մը կազմութեան գծով հաւանութիւնը: Ռուսիա եւ Ֆրանսա ըսած էին, որ պատրաստ են Իրաք ուժ ուղարկելու, եթէ ծրագիրը հովանաւորուի ու առաջնորդուի ՄԱԿի կողմէ: Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով ըսաւ, որ Մոսկուա կ'ուզէ Իրաքի մասին Ապահովութեան խորհուրդի նոր որոշում մը, որ աւելի գործօն ու բանալի դերակատարութիւն պէտք է տայ միջազգային կազմակերպութեան՝ Իրաքի մէջ: Իվանով շեշտեց, որ Իրաքի մէջ կազմութիւնը օրըստօրէ կը վատթարանայ՝ քաղաքական, տնտեսական, ապահովական եւ ընկերային մակարդակներու վրայ: Կացութիւնը կարելի է փրկել իրաքցի ժողովուրդին օրինական ներկայացուցիչներուն եւ ՄԱԿի միջեւ գործակցութեամբ միայն, աւելցուց Իվանով:

Միւս կողմէ, ամերիկացի զինուոր մը եւս սպաննուեցաւ երէկ Պաղտատի մէջ, ուր խուճը մը զինուորներ յարձակումի ենթարկուեցան զինեալներու կողմէ, որոնք ըստ ամերիկեան աղբիւրներու նախկին ղեկավար Սատտամ Հիւսէյնի հետեւորդներն են: Ականատեսներ յայտնեցին, որ Պաղտատի օդակայանին մէջ ալ ամերիկացի զինուորներուն վրայ ռումբեր արձակուած են Երկուշաբթիէն Երեքշաբթի լուսցող գիշերուան ընթացքին: Ամերիկեան աղբիւրներ չհաստատեցին լուրը:


ԵԳԻՊՏՈՍԻ նախագահ Հիւսիսի Մուպարաբ զգուշացուց, որ Իրաքի մէջ տարածուող քառուրդ կը սպառնայ ամբողջ շրջանին: Մուպարաբ աւելցուց, որ միայն իրաքցիներուն կողմէ ընտրուած կառավարութիւնը մը կրնայ կարգն ու կանոնը վերահաստատել երկիրին մէջ:

ԵԻՐՈՊԱԿԱՆ Միութեան արտաքին գործոց նախարարները միացեալ յայտարարութեամբ մը պատրաստակամութիւն յայտնեցին մասնակցելու Իրաքը վերակառուցելու բազմազգեան ճիգերուն: Յայտարարութիւնը կը նշէր սակայն որ այդ ճիգերուն մէջ դերակատար պէտք է ըլլայ ՄԱԿ:

(ԱՅՓ)

### ՀՐԴԵՂ ԷՅՖԵԼԻ ԱՇՏԱՐԱԿԻՆ ՄԷՋ

Ա շ խ ա ր հ ի ի հրաշալիքներն մէկը նկատուող Փարիզի Էյֆէլի աշտարակին երրորդ յարկին վրայ երէկ ծագած է հրդեհ մը, ահապանգի մատնելով բազմաահապար զբօսաշրջիկներն ու անձնակազմը, որոնք անմիջապէս պարպած են աշտարակը: Ոչ մէկ ցոյց կամ վիրաւոր արձանագրուած է: Հրդեհը, ըստ ֆրանսական պատկերասփիռի կայաններուն, ծագած է յետ էլեկտրական խանգարումի:



### ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ՄՈՆՐՈՎԻԱ.- Լիպերիոյ մայրաքաղաք Մոնրովիոյ մէջ երէկ բախումները դադար չեն ունեցած ըմբոստներու եւ կառավարական ուժերու միջեւ: Պաշտպանութեան նախարար յայտնած է, թէ անցող քանի մը օրերուն քաղաքային զոհերու թիւը 700ի մօտեցած է, մինչ ոչ հաւաստի աղբիւրներու համաձայն, ըմբոստ ուժերը տիրական ներկայութիւն դարձած են մայրաքաղաքին մէջ:

● ՄՈՍԿՈՒԱ.- Չեչենիոյ սահմանակից Իսկուշեթիոյ մէջ մարդ մը ինքիւնք պայթեցուցած է անցարգելի մը վրայ, երբ ոստիկաններ անոր փաստաթուղթերը պահանջած են, այս ձեւով ձախողութեան մատնելով անձնասպանական հաւանական գործողութիւն մը:

● ՄՍՏՐԻՏ.- Սպանական 2 քաղաքներու պանդոկներու մէջ երէկ երկու ոմբահարումներու պատճառով վիրաւորուած են 8 անձեր, որոնց կարգին՝ 4 ոստիկաններ: Պայթումներէն քանի մը վայրկեան առաջ, մարդիկ հեռացուած են պանդոկներէն՝ ԷՄՍԻ անունով հեռաձայնային զգուշացումէ մը ետք:

● ՍԻՆԿԱՍՏՈՒՐ.- Սինկափուրի մէջ բժիշկներ յաջողած են կոնքէն իրարու միացած քանի մը ամսուան երկու աղջնակներ իրարմէ բաժնել՝ զլուխէն միացած իրանցի 29 տարեկան քոլրերու մահէն 2 շաբաթ ետք: Վիրաբուծութիւնը տեղի ունեցած է նոյն հիւանդանոցին մէջ:

● ՎԻԵՆՆԱ.- Աւստրիացի վիրաբուծներ անցեալ Շաբաթ օր ձեռնարկած են լեզուի առաջին պատուաստում - վիրաբուծութեան: 42 տարեկան հիւանդը, որ լեզուի քաղցկեղէ կը տառապէր, առողջական յաւ վիճակի մէջ կը գտնուի, ըստ Վիեննայի այն հիւանդանոցին, ուր տեղի ունեցած է վիրաբուծութիւնը:

● ՔՈՒԲԱ.- Զափոնի հարաւարեւմտեան շրջանին մէջ անցեալ շաբաթվերջին արձանագրուած հողի սահանքներուն եւ ողողումներուն պատճառով մահերու թիւը 15ի բարձրացած է, մինչ անհետացած 7 անձերու փնտռութիւնը կը շարունակուի երէկ:

● ԼԻՄԱ.- Փերուի հիւսիսարեւմտեան Անտեան լեռներուն վրայ ձիւնի սահանք մը 3 գերմանացի եւ 3 իսրայէլացի լեռնագնացներ, ինչպէս նաեւ փերուցի 2 առաջնորդներ սպաննած է երկուշաբթի օր:

● ՄԱՆԿԱՆԱ.- Հիւսիսային Ֆիլիպիններու մէջ երէկ առնուապ 6 ցոյհ արձանագրուած է Իմպուտո մրիկի կառավարող: Հապարաւոր մարդիկ հարկադրաբար իրենց տուններէն հեռացած են:

● ՊԵՅՅԻՆԿ.- Չինաստանի մէջ Երկուշաբթի օր տեղի ունեցած 6,2 աստիճան ռիսքըր ուժգնութեամբ շարժ մը առնուապ 15 ցոյհ խառն է եւ աւելի քան 290 հոգի վիրաւորած: Աւելի քան 5000 շէնք քանդուած է: Իսկ արեւելեան Շուժու քաղաքին մէջ հին պատի մը մէկ մասին փլուզումին պատճառով 11 հոգի մահացած է երէկ առաւօտ:

### ԹՈՆԻ ՊԼԷՐ ԿԸ ՀԵՐՔԷ, ԹԷ ԱՆՉԱՄԲ ՀԱԻԱՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ Է, ՈՐ ՏԷՅՎԻՏ ՔԵԼԻԻ ԱՆՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԻ

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր հերքեց, որ ինք անձամբ հաւանութիւն տուած է, որ գիտնական եւ պէնթերու մասնագետ Տէյվիտ Քելիի անունը հրապարակուի իբրեւ աղբիւր Պի. Պի. Սի.ի տեղեկագիրին, ուր կը նշուէր, թէ կառավարութիւնը չափազանցուած կերպով ներկայացուցած է Իրաքի պէնթերու ենթադրեալ սպառնալիքը: Պլէր, որ աւարտե-

լով Չինաստան այցելութիւնը, Հոնկ Բոնկ կ'ուղղուէր, շեշտեց, որ ինք լիազօրութիւն չէ տուած Քելիի անունը հրապարակելու: Պլէր աւելցուց, որ այս հանգրուանին պէտք է առիթ տալ կատարուող հետաքննութեան, որ բացուած էր Քելիի անձնասպանութեան լոյսին տակ: Ան ըսաւ, որ հետաքննութեան ընթացքին պիտի ուղղուին շատ մը անհրաժեշտ, որոնք



պատրաստ է պատասխանել:

Քելիի մահը փոթորիկ մը բարձրացուցած է Բրիտանիոյ տարածքին եւ պատճառ դարձած, որ մամուլը հարց տայ, թէ ով է պատասխանատուն կամ մեղադրելին անոր մահուան: Ըստ «Ֆայնէնշըլ Թայմս»-ի, պաշտպանութեան նախարար ձեֆ Հոն անձամբ լիազօրած է լրատուական արշաւ մը, որպէս Վի յայտնի ըլլայ, թէ Քելի փոխանցած է լուրերը Պի. Պի. Սի.ի, որ

փորձած էր գաղտնի պահել իր աղբիւրին ինքնութիւնը: Քելիի ընտանիքը կ'ըսէ, որ ան ծանր ճնշումներու կ'ենթարկուէր, յատկապէս խորհրդարանին կողմէ հարցաքննուելով:

Միւս կողմէ, Պլէր երէկ վերահաստատեց, որ չի զղջար Իրաքի դէմ պատերազմի որոշում տուած ըլլալուն համար: Ան ըսաւ, որ որքան ալ դժուար որոշում էր անիկա, չի զղջար, որովհետեւ խարարութիւնը, որ